ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 9 նիստի, կայացած 2025թ. Դեկտեմբերի 1 -ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Եղեգիս համայնքի ղեկավարի տեղակալ Ահարոն Գաբրիելյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Արսենյան / մարզպետ /

քարտուղար՝ Ա. Մարգարյան

անդամներ՝ Գ. Մարգարյան

Ա. Ղազարյան

Հ. Նազարյան

Է. Հովհաննիսյան

Ա. Գաբրիելյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Եղեգիս համայնքի Սալլի բնակավայրի 1 /մեկ/ միավոր քաղաքացու համասեփականություն հանդիսացող 0,053 հա / ծածկագիր 10-038-0113-0009 / գյուղատնտեսական /հնդավոր այգին/ փոխադրել գյուղատնտեսական անջրտի վարելահողի՝ չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Վ. Արսենյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը իրոք փաստացի վարելահող է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված 0,053 հա գյուղատնտեսական հնդավոր այգին, որը հանդիսանում է քաղաքացի Սոսիկ Շավարշյանի սեփականությունը՝ դասել անջրտի վարելահողերի շարքին:

Առաջարկվեց Եղեգիս համայնքի ղեկավարի տեղակալին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Արենի համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 1 /մեկ/ միավոր քաղաքացի Սոսիկ Շավարշյանի սեփականություն

հանդիսացող 0,053 հա / ծածկագիր 10-038-0113-0009 / գյուղատնտեսական / /հնդավոր այգին/ փոխադրել գյուղատնտեսական անջրտի վարելահողի՝ չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել հողի սեփականատիրոջը, համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. ՍՐՍԵՆՅԱՆ

Քարտուղար՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ